

ՈՐԵՆՔ

ԽՍՀՄ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ
ԱՎՏՈՆՈՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՍՈՒԹՅԱՆ

34

Խ-84

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

347.9

Խ-111

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՍՀ ԱՐԴՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1989


0 5 FEB 2007

0 7 FEB 2010

347.2
4-10-11

ՈՐԵՆՔ

ԽՍՀՄ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՄ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ



21 FEB 2014

38.364



Սրբադո՛ւ շ. Մալիկյան

Գլավլիտի լիազոր Տ-1665 Պատվ. 144 Տիրաժ. 2000

Հայկական ԽՍՀ. ԺԿԽ հրատարակչություն

Խորհրդային Հայաստանի տպարան, Յերևան

3003
39

Ո Ր Ե Ն Ք

ԽՍՀՄ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՄ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ԽՍՀՄ Սահմանադրությամբ
102 հոդվածի համադատասխան՝ արդարադա-
տությունը ԽՍՀՄ-ում իրականացվում է ԽՍՀՄ
Գերագույն Դատարանի կողմից, միութենական
հանրապետությունների գերագույն դատարան-
ների, յերկրամասային ու մարզային դատարան-
ների, ավտոնոմ հանրապետությունների ու ավ-
տոնոմ մարզերի դատարանների, ոկրուգային
դատարանների կողմից, ԽՍՀՄ հատուկ դատա-
րանների կողմից, վերոնշյալ ստեղծվում են ԽՍՀՄ
Գերագույն Խորհրդի վորոշմամբ, ժողովրդական
դատարանների կողմից:

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ Արդարադատությամբ

խնդիրն եւ ամեն տեսակի վտանգություններն ից պաշտպանել:

ա) ԽՍՀՄ Սահմանադրությամբ և միութեանական ու ավտոնոմ հանրապետությունների Սահմանադրություններով սահմանված ԽՍՀՄ հասարակական և պետական կառուցվածքը, տնտեսության սոցիալիստական սիստեմը և սոցիալիստական հասարակայնությունը:

բ) ԽՍՀՄ քաղաքացիների՝ քաղաքական, աշխատանքային, բնակարանային և այլ անձնական և գույքային իրավունքներն ու շահերը, վորոնք յերաշխսավորված են ԽՍՀՄ Սահմանադրությամբ և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Սահմանադրություններով:

գ) Պետական հիմնարկությունների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների իրավունքները և որենքով պաշտպանվող շահերը:

ԽՍՀՄ Արդարագատության խնդիրն ե՝ ապահովել խորհրդային որենքների ճշգրիտ ու անշեղ կատարումը բոլոր հիմնարկությունների, կազմակերպությունների, պաշտոնատար անձերի և ԽՍՀՄ քաղաքացիների կողմից:

ՀՈՂՎԱԾ 3. Խորհրդային դատարանը քրեական պատժի միջոցներ կիրառելով վոչ միայն

պատժում և հանցագործներին, այլև նպատակ ունի հանցագործների ուղղումը և վերագոտախարակումը:

Իր ամբողջ գործունեյությամբ դատարանը ԽՍՀՄ քաղաքացիներին դատախարակում և հայրենիքին և սոցիալիզմի գործին նվիրվածության վոգով, խորհրդային որենքների ճշգրիտ ու անշեղ կատարման վոգով, սոցիալիստական սեփականությանը խնամքով վերաբերմունք ունենալու, աշխատանքի կարգապահության, պետական ու հասարակական պարտականությունների նկատմամբ ազնիվ վերաբերմունքի, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու վոգով:

ՀՈՂՎԱԾ 4. Սույն որենքի յերկրորդ հոդվածում նշված խնդիրները ԽՍՀՄ-ում դատարանները իրագործում են հետեվյալ միջոցներով.

ա) դատական նիստերում քրեական գործերը քննելով և որենքով սահմանված պատժի միջոցներ կիրառելով հայրենիքի պաճաճանների, վնասարարների, սոցիալիստական սեփականության հափշտակիչների և ժողովրդի մյուս թշնամիների նկատմամբ, լինչպես և կողոպտիչների, գողերի, խուլիգանների և այլ հանցագործների նկատմամբ:

բ) դատական նիստերում քննելով և լու-

ծելով այն վիճելի գործերը, վորոնք շոշափում են քաղաքացիներին, պետական հիմնարկություններին, ձեռնարկություններին, կոլտնտեսություններին և այլ հասարակական կազմակերպություններին իրավունքներն ու շահերը:

ՀՈՒՎԱԾ 5. Արգարագրատությունը խՍՀՄ-ում իրականացվում է հետևյալ հիմունքներով.

ա) գատարանի միասնականության և բոլոր քաղաքացիներին համար հավասարության ըսկըզբունքներով, անկախ քաղաքացիներին սոցիալական, գույքային և ծառայության դիրքից, նրանց ազգային և ռասայական պատկանելիությունից:

բ) խՍՀՄ բոլոր գատարանների համար քրեական, քաղաքացիական և արոցեսուալ որենսդրության միասնականության և պարտադրության սկզբունքով:

ՀՈՒՎԱԾ 6. Դատավորներն անկախ են և յենթարկվում են միայն որենքին (խՍՀՄ Սահմանադրության 112) հոդված:

ՀՈՒՎԱԾ 7. խՍՀՄ Սահմանադրության 110-րդ հոդվածի համապատասխան՝ գատավարությունը խՍՀՄ-ում կատարվում է Միութենական կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չաիրապետողներին համար ապահովելով գործի նյութերին

հետ լիակատար ծանոթացում թարգմանչի միջոցով, ինչպես և գատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունք:

ՀՈՒՎԱԾ 8. խՍՀՄ Սահմանադրության 111-րդ հոդվածի համապատասխան՝ խՍՀՄ բոլոր գատարաններում գործերի քննությունը դոնբաց է, վորքան վոր որենքով չեն նախատեսված բացառություններ, մեղադրյալի համար ապահովելով պաշտպանության իրավունք:

ՀՈՒՎԱԾ 9. խՍՀՄ Սահմանադրության 103-րդ հոդվածի համապատասխան՝ խՍՀՄ բոլոր գատարաններում գործերի քննությունը կատարվում է ժողովրդական ատենակալներին մասնակցությամբ, բացի որենքով նախատեսված դեպքերից:

ՀՈՒՎԱԾ 10. խՍՀՄ Սահմանադրության 105, 106, 107, 108 և 109-րդ հոդվածների համապատասխան՝ գատարանները խՍՀՄ-ում կազմվում են ընտրականության սկզբունքներով, սույն որենքով սահմանված կարգով:

ՀՈՒՎԱԾ 11. Դատավորներ և ժողովրդական ատենակալներ կարող են լինել ընտրական իրավունքներից ռզավող բոլոր քաղաքացիները:

ՀՈՒՎԱԾ 12. Ժողովրդական ատենակալները գատարաններում իրենց պարտականու-

թյունները՝ կատարման համար կանչվում են ըստ ցուցակի՝ հերթականությամբ կարգով, տար-
վա մեջ վաղ ավելի, քան 10 օրով, բացի այն
դեպքերից, յերբ այս ժամկետի յերկարացումն
առաջանում է դատական գործի քննությունը
ժողովրդական ատենակալների մասնակցությամբ
անհրաժեշտությունը:

Ժողովրդական ատենակալները դատարա-
նում իրենց պարտականությունները կատարե-
լու ժամանակ ոգավում են դատավորի բոլոր
իրավունքներով:

ՀՈՒՎԱԾ 13. Բանվորների և ծառայողների
թվին պատկանող ժողովրդական ատենակալնե-
րի աշխատավարձը, դատարանում իրենց պար-
տականությունները կատարելու ամբողջ ժա-
մանակամիջոցում, պահպանվում է:

Մնացած բոլոր դեպքերում ժողովրդական
ատենակալներին՝ դատարանում իրենց պարտա-
կանությունների կատարման հետ կապված ծախ-
սերի վճարումը կատարվում է միութենական
հանրապետությունների որենսդրությամբ սահ-
մանված կարգով:

ՀՈՒՎԱԾ 14. Բոլոր դատարաններում գոր-
ծերի քննությունը կատարվում է դատավորի և
յերկու ժողովրդական ատենակալների կազմով,
բացի որենքով հատկապես նախատեսված դեպ-
քերից, յերբ այդ քննությունը կատարվում է
դատարանի յերեք անդամներով:

ՀՈՒՎԱԾ 15. Բացի ՈՍՀՄ Գերագույն Դա-
տարանից և միութենական հանրապետությու-
նների Գերագույն դատարաններից, մյուս բոլոր
դատարանների դատավճիռները, վճիռները և
վորոշումները կարող են որենքով սահմանված
կարգով դանդաղարկվել դատապարտվածների,
ներանց պաշտպանների, հայցվորների, պատա-
խանող կողմերի և ներանց շահերը ներկայաց-
նողների կողմից կամ դատախազի կողմից բողո-
քարկվել վերագաս դատարանին:

Գանդատներին և բողոքների քննարկման
ժամանակ վերագաս դատարանը գործում յեղած
և կողմերի ներկայացրած նյութերով ստուգում
է ստորագաս դատարանի կողմից կայացրած դա-
տավճուր կամ վորոշման որինակությունը և հիմ-
նավորված լինելը:

ՀՈՒՎԱԾ 16. Դատական դատավճիռները,
վճիռները և վորոշումները, վորոնք որինական
ուժի մեջ են մտել, կարող են բողոքարկվել մի-
այն ՈՍՀՄ Դատախազի կամ Միութենական հան-
րապետության Դատախազի կողմից, ՈՍՀՄ Գերա-
գույն Դատարանի նախագահի և Միութենական
Հանրապետության Գերագույն Դատարանի նա-
խագահի կողմից՝ համապատասխան սույն որենքի
51, 64, 74-րդ հոդվածների:

ՀՈՒՎԱԾ 17. Դատավորներին իրենց պաշ-
տոններից և ժողովրդական ատենակալներին ի-

ընդ պարտականություններէց ազատել թույլատրվում է միայն կերպ, քան ընտրողների կողմից հետ կանչումով, կամ թե նրանց նկատմամբ դատարանի դատավճիռ կայացնելու ուժով:

ՀՈՒՎԱԾ 18. Դատավորների դեմ քրեական հետապնդում հարուցելը, այդ կապակցութեամբ նրանց պաշտոնից հեռացնելը և դատի հանձնելը կատարվում է՝

Ժողովրդական դատավորների, յերկրամասային, մարզային, օկրուգային դատարանների անդամների, ավտոնոմ մարզերի դատարանների, միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների Գերագույն դատարանների անդամների նկատմամբ՝ Միութենական հանրապետութեան դատախազի վորոշումով, Միութենական հանրապետութեան Գերագույն խորհրդի Նախագահութեան սանկցիայով:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի անդամների և ԽՍՀՄ հատուկ դատարանների անդամների նկատմամբ՝ ԽՍՀՄ Դատախազի վորոշմամբ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահութեան սանկցիայով:

ՀՈՒՎԱԾ 19. Ժողովրդական դատավորի ժամանակավոր բացակայութեան դեպքում (հիվանդութիւն, արձակուրդ և այլն) աշխատավորների դեպուտատների շրջանային խոր-

հրդի կողմից դատավորի պարտականութիւնների կատարումը, նրա բացակայութեան ժամանակ, գրվում է ժողովրդական ատենակալներից մեկի վրա:

ՀՈՒՎԱԾ 20. Այն դեպքում, յերբ ժողովրդական դատավորը իր լիազորութիւնների ժամկետը լրանալուց առաջ հեռանում է, ժողովրդական դատավորի նոր ընտրութիւններ կազմակերպվում են միայն ուշ, քան յերկամսյա ժամանակամիջոցում՝ նրա հեռանալու օրից հաշված:

Ժողովրդական դատավորի նոր ընտրութիւններ կազմակերպվում են Միութենական հանրապետութեան Արդարադատութեան ժողովրդական կոմիտեի ատի կողմից, իսկ ավտոնոմ հանրապետութիւնում՝ ավտոնոմ հանրապետութեան Արդարադատութեան ժողովրդական կոմիտեի կողմից:

Ոկրուգային, յերկրամասային, մարզային և միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների Գերագույն Դատարանների անդամների հեռանալու դեպքում, ինչպէս և հատուկ դատարաններ և ԽՍՀՄ Գերագույն Դատարանի անդամների հեռանալու դեպքում դատարանների նոր անդամների ընտրութիւնները կատարվում են մարզի, յերկրամասի, օկրուգի աշխատավորների

դեպուտատները և խորհուրդները, միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն խորհրդի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական սեսիայում:

II.

ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՀՈԴՎԱԾ 21. Ժողովրդական դատարանը քննում է.—

ա) քրեական գործեր.

քաղաքացիների կյանքի, առողջության, ազատության և արժանապատվության դեմ հանցագործություններին վերաբերող—սպանությունների, մարմնական վնասվածքներ հասցնելու, ապրիլի աքորտներ կատարելու, տալու ընկալար ազատությունից զրկելու, բռնաբարության, ալիմենտի չարամիտ չվճարման, վիբրավորանքի, խուլիգանության, զրպարտության վերաբերյալ,

գույքային հանցագործությունների մասին—ավազակության, կողոպուտի, գողության, խաբդախության, հարստահարության վերաբերյալ,

պաշտոնատուր անձանց պաշտոնական հանցագործությունների վերաբերյալ—պաշտոնի չարաշահման, իշխանազանցության, իշխանու-

թյան անգործունեության, վասնումների, անարևոտստության, կեղծիքների, թերակշռման, թերաշափման, գների բարձրացման վերաբերյալ,

վարչակարգի դեմ կատարված հանցագործությունների վերաբերյալ—ընտրական որհնքի խախտման, որհնքով սահմանված հարկերի ու գանձումների չարամիտ չվճարման, պետական մթերությունների և պարտականությունների կատարումից հրաժարվելու, զինակոչից և զինվորական ծառայության պարտականություններից խուսափելու, իշխանության որդանների որհնական կարգադրությունների խախտումների վերաբերյալ,

բ) քաղաքացիական գործեր.—

գույքային հայցեր,

աշխատանքի, որհնքների խախտման հետ կապված հայցեր,

ալիմենտների վճարման վերաբերյալ հայցեր,

ժառանգության վերաբերյալ հայցեր,

և այլ քրեական և քաղաքացիական գործեր, վերոնք որհնքով յենթակա յեն նրա իրավասությանը:

ՀՈԴՎԱԾ 22. ԽՍՀՄ Սահմանադրության 109-րդ հոդվածի հիման վրա ժողովրդական դատարաններն ընտրվում են շրջանի քաղաքա-

ցինքերի կողմից ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քվեարկությամբ, յերեք տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 23. Ժողովրդական գաղափորները և ժողովրդական ատենակալները ընտրվում են շրջանների քաղաքացիների կողմից, ըստ ընտրական ուղղությունների. ժողովրդական գաղափորների և ժողովրդական ատենակալների ընտրական ուղղուն ընդգրկում է այն ամբողջ բնակչությունը, վոր ապրում է տվյալ ժողովրդական գաղափարի գործունեություն տերիտորիայում:

ՀՈՒՎԱԾ 24. Ժողովրդական գաղափորների և ժողովրդական ատենակալների թեկնածուներ առաջադրելու իրավունք է ապահովվում հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների համար. կոմունիստական կուսակցական կազմակերպություններին, պրոֆեսիոնալ միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդական կազմակերպություններին, կուլտուրական ընկերություններին, ինչպես և բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովներին՝ ըստ ձևանորմությունների, զինվորական ծառայողների ընդհանուր ժողովներին՝ ըստ զինվորական մասերի, գյուղացիների ընդհանուր ժողովներին՝ ըստ կոլանտեսությունների, խորհանտեսությունների:

րի, բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովներին՝ ըստ խորհանտեսությունների:

ՀՈՒՎԱԾ 25. Ժողովրդական գաղափորների և ժողովրդական ատենակալների թեկնածուների ցուցակագրման և թեկնածուների ցուցակների հրապարակման կարգը, ինչպես և նրանց ընտրությունների ժամկետներն ու կարգը վորոշվում են միութենական հանրապետությունների Գերագույն Սորհուրդների կողմից հաստատված «Դաղափորների և ժողովրդական ատենակալների ընտրությունների կանոնադրությունների»:

ՀՈՒՎԱԾ 26. Յուրաքանչյուր շրջանի համար ժողովրդական գաղափարների քանակը սահմանվում է միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Սորհրդի կողմից՝ Միութենական հանրապետության արդարագատության ժողովրդական կոմիսարի առաջադրությամբ: Ավտոնոմ հանրապետություններում յուրաքանչյուր շրջանի համար ժողովրդական գաղափարների թիվը սահմանվում է ավտոնոմ հանրապետության ժողովրդական կոմիսարների Սորհրդի կողմից՝ Ավտոնոմ հանրապետության արդարագատության ժողովրդական կոմիսարի առաջադրությամբ:

ՀՈՒՎԱԾ 27. Ժողովրդական դատարանը մինչև դատական նիստում գործը քննելը՝

ա) հաստատում է դատախազի ներկայացրած մեղադրական յեզրակացությունը: Մեղադրական յեզրակացությունը համաձայն չլինելու դեպքում Ժողովրդական դատարանն իրավունք ունի գործը հետ վերադարձնել դատախազին՝ լրացուցիչ հետաքննություն կատարելու համար, կամ դատական գործը կարճել՝ դրա համար բավականաչափ հիմքերի առկայություն դեպքում:

բ) լուծում է մեղադրյալին կալանքի տակ առնելու կամ նրան կալանքից ազատելու հարցը:

գ) վորոշում է կայացնում գործի քննության ժամանակ պաշտպանի կամ դատախազի անպայման մագնակցության մասին:

ՀՈՒՎԱԾ 28. Ժողովրդական դատավորը՝

ա) ըստ ստացված գանգատների և հայտարարությունների վորոշում է կայացնում քրեական հետապնդում հարուցելու կամ այդ բանում մերժելու մասին:

բ) անհրաժեշտության դեպքում դիմումները կամ գանգատներն ուղարկում է հետաքննչական մարմիններին՝ հետաքննություն կատարելու:

գ) նշանակում է գործերի լսելը:

դ) կարգադրություն է անում մեղադրյալներին, վկաներին, եքսպերտներին դատարան կանչելու մասին և գործը քննելու ժամանակի մասին ծանուցում է հայցվորներին ու պատասխանող կողմերին:

յե) նախագահում է Ժողովրդական դատարանի նիստերին:

ՀՈՒՎԱԾ 29. Ժողովրդական դատավորներն իրենց աշխատանքի և Ժողովրդական դատարանի աշխատանքի համար հաշվետու յեն ընտրողներին առաջ:

III.

3003
39

ՅԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ՈԿՐՈՒԳԱՑԻՆ
ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՍ ՄԱՐԶԻ
ԴԱՏԱՐԱՆԸ

ՀՈՒՎԱԾ 30. ԽՍՀՄ Սահմանադրության 108-րդ հոդվածի համապատասխան յերկրամասային, մարզային, օկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանն ընտրվում է աշխատավորների յերկրամասային, մարզային, օկրուգային աշխատավորների դեպուտատների խորհրդի կողմից կամ ավտոնոմ մարզի աշխատավորների դեպուտատների խորհրդի կողմից 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 31. Յերկրամասային, մարզային,



ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանը կազմված ե նախագահից, նախագահի տեղեկալիներից, դատարանի անդամներից և ժողովրդական տնտեսականներից, վորոնք կանչվում են դատական գործերի քննությանը մասնակցելու:

ՀՈՂՎԱԾ 32. Յերկրամասային մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանները քննում են որենքով նրանց իրավասությանը վերապահված քրեական գործերը՝ հակահեղափոխական հանցագործությունների վերաբերյալ, պետական կառավարման դեմ առանձնապես վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ, սոցիալիստական սեփականության հախշտակման վերաբերյալ, պաշտոնական ու տնտեսական առանձնապես կարեւոր հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես և որենքով նրանց իրավասությանը վերապահված քաղաքացիական գործերը՝ պետական և հասարակական հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև յեղած վեճերի վերաբերյալ:

Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանը և ավտոնոմ մարզի դատարանը բացի այդ՝ քննում են նաև ժողովրդական դատա-

րանների դատավճիռների, վճիռների ու վորոշումների վերաբերյալ գանդատները և բողոքները:

ՀՈՂՎԱԾ 33. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի կազմում գործում են.

ա) քրեական գործերի դատական կոլեգիալ երկրամասային, մարզային, ոկրուգային դատարանին և ավտոնոմ մարզի դատարանին յենթակա քրեական գործերի քննության համար, ինչպես և ժողովրդական դատարանների դատավճիռների և վորոշումների նկատմամբ տրված գանդատների ու բողոքների քննության համար:

բ) քաղաքացիական գործերի դատական կոլեգիալ—յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանին և ավտոնոմ մարզի դատարանին յենթակա քաղաքացիական գործերի քննության համար, ինչպես և ժողովրդական դատարանների վճիռների և վորոշումների նկատմամբ տրված գանդատների ու բողոքների քննության համար:

ՀՈՂՎԱԾ 34. Յերկրամասային, մարզային, ոկրուգային դատարանի և ավտոնոմ մարզի դատարանի դատական կոլեգիաները քրեական և քաղաքացիական գործերը քննում են նախագահող՝

ԱՎՏՈՆՈՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՀՈՒՎԱԾ 38. ԽՍՀՄ Սահմանադրության 107-րդ հոդվածի համապատասխան՝ Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանն ընտրվում է Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից՝ 5 տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 39. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանը կազմված է նախագահից, նախագահի տեղակալներից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենակալներից, վերոնշյալ կանչվում են մասնակցելու դատական գործերի քննությանը:

ՀՈՒՎԱԾ 40. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Դատարանը քննում է որոշ դեպքերում իրավասությանը վերադասված քրեական գործերը՝ հակահեղափոխական հանցագործությունները, պետական կառավարման դեմ ուղղված առանձնապես վտանգավոր հանցագործությունները, սոցիալիստական սեփականության հափշտակություն, պաշտոնեական և տնտեսական առանձնապես կարևոր հանցագործությունները վերաբեր-

դատարանի նախագահի կամ անդամի և յերկու ժողովրդական ատենակալների կազմով:

ՀՈՒՎԱԾ 35. Յերկրամասային, մարզային, օկրուգային դատարանի, Ավտոնոմ մարզի դատարանի դատական կոլեգիաները ժողովրդական դատարանների դատավճիռների, վճիռների և վորոշումների նկատմամբ յեղած գանգատներն ու բողոքները քննում են համապատասխան դատարանների յերեք անդամների կազմով:

ՀՈՒՎԱԾ 36. Յերկրամասի կազմի մեջ մտնող մարզերում օկրուգային և մարզային դատարանները գործում են նույն կազմով, ինչ վոր յերկրամասային դատարանը:

ՀՈՒՎԱԾ 37. Յերկրամասային, մարզային, օկրուգային դատարանի և Ավտոնոմ մարզի դատարանի նախագահը նախագահում է դատական նիստերին կամ դատական նիստերին նախագահելու համար նշանակում է յերկրամասային, մարզային, օկրուգային դատարանի և Ավտոնոմ մարզի դատարանի անդամին, նշանակում է գործերը լսելը, կարգադրություն է անում մեղադրյալներին, վկաներին, եքսպերտներին դատարան կանչելու մասին և գործի քննության ժամանակի մասին ծանուցում է հայցվորներին ու պատասխանողներին:

յալ, ինչպես և որենքով նրա իրավասու-
թյանը վերապահված քաղաքացիական գործերը՝
պետական և հասարակական հիմնարկություն-
ների, ձեռնարկությունների ու կազմակերպու-
թյունների մինչև յեղած վեճերի վերաբերյալ:

Ավտոնոմ հանրապետության Գերագույն
Պատարանը բացի այդ՝ քննում է ժողովրդա-
կան դատարանների դատավճիռների, վճիռների
և վորոշումների նկատմամբ տրված գանգատ-
ներն ու բողոքները:

ՀՈՒՎԱԾ 41. Ավտոնոմ հանրապետության
Գերագույն Պատարանի կազմում գործում են.

ա) քրեական գործերի դատական կոլեգիա —
որենքով Ավտոնոմ հանրապետության Գերա-
գույն Պատարանի իրավասությանը վերապահ-
ված քրեական գործերի քննության համար,
ինչպես և ժողովրդական դատարանների դատա-
վճիռների և վորոշումների նկատմամբ տրված
գանգատներն ու բողոքները քննելու հա-
մար.

բ) քաղաքացիական գործերի դատական
կոլեգիա — որենքով Ավտոնոմ հանրապետության
Գերագույն Պատարանի իրավասությանը վե-
րապահված քաղաքացիական գործերի քննու-
թյան համար, ինչպես և ժողովրդական դատա-
րանների վճիռների և վորոշումների նկատմամբ

տրված գանգատների ու բողոքների քննության
համար:

ՀՈՒՎԱԾ 42. Ավտոնոմ հանրապետության
Գերագույն Պատարանի դատական կոլեգիանե-
րը գործերը քննում են նախագահող — նախա-
գահի կամ Գերագույն Պատարանի անդամի և
ժողովրդական ատենակալների կազմով:

ՀՈՒՎԱԾ 43. Ավտոնոմ հանրապետության
Գերագույն Պատարանի դատական կոլեգիանե-
րը ժողովրդական դատարանների դատավճիռ-
ների, վճիռների և վորոշումների նկատմամբ
տրված գանգատներն ու բողոքները քննում
են Ավտոնոմ հանրապետության Գերագույն
Պատարանի յերեք անդամների կազմով:

ՀՈՒՎԱԾ 44. Ավտոնոմ հանրապետության
Գերագույն Պատարանի նախագահը նախագա-
հում է դատական նիստերին կամ դատական
նիստերին նախագահելու համար նշանակում է
Ավտոնոմ հանրապետության Գերագույն Պա-
տարանի անդամին, նշանակում է գործը լսելը,
կարգադրություն է անում մեղադրյալներին,
վկաներին, եքսպերտներին դատարան կանչե-
լու վերաբերյալ և գործը լսելու ժամանակի
մասին ծանուցում է հայցվորներին ու պատաս-
խանողներին:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՀՈՒՎԱԾ 45. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանը հանդիսանում է Միութենական հանրապետության բարձրագույն դատական օրգանը: Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի վրա յեզրվում Միութենական հանրապետության, տվյալ Միութենական հանրապետության կազմի մեջ մտնող Ավտոնոմ հանրապետությունների, յերկրամասերի, մարզերի և ոկրուգների բոլոր դատական օրգանների դատական գործունեության նկատմամբ հսկողությունը:

ՀՈՒՎԱԾ 46. ԽՍՀՄ Սահմանադրության 106-րդ հոդվածի համապատասխան՝ Միութենական հանրապետության Գերագույն Դատարանն ընտրվում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 47. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանը կազմված է նախագահից, նախագահի տեղակալներից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենակալ-

ներից, վերոնք կանչվում են դատական գործերի քննությունը մասնակցելու:

ՀՈՒՎԱԾ 48. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանը գործում է հետևյալ կազմով.

ա) քրեական գործերի դատական կոլեգիա՝ օրենքով Միութենական Գերագույն Դատարանի իրավասությանը վերապահված քրեական գործերի քննության համար, ինչպես և Միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և այլ դատարանների վճիռների ու վորոշումների նկատմամբ տրված գանգառներն ու բողոքները քննելու համար:

բ) քաղաքացիական գործերի դատական կոլեգիա՝ օրենքով Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի իրավասությանը վերապահված քաղաքացիական գործերը քննելու համար, ինչպես և Միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և մյուս դատարանների վճիռների ու վորոշումների նկատմամբ տրված գանգառներն ու բողոքները քննելու համար:

ՀՈՒՎԱԾ 49. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի դատական կոլեգիաները գործերը քննում են նախագահող—նախագահի կամ Գերագույն Դատարանի անդա-

մի և յերկու ժողովրդական ատենակալները կազմով:

ՀՈՒՎԱԾ 50. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի գատական կոլեգիաները Միութենական հանրապետության յերկրամասային, մարզային և այլ գատարանների գատավճիռների, վճիռների ու վորոշումների նկատմամբ տրված դանդաաներն ու բողոքները քննում են Գերագույն Դատարանի յերեք անդամների կազմով:

ՀՈՒՎԱԾ 51. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանը հանրապետության գատարանների գատական գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնում և հետեւյալ միջոցով.

ա) քննելով **ԽՍՀՄ** Դատախազի, Միութենական հանրապետության Դատախազի, **ԽՍՀՄ** Գերագույն Դատարանի նախագահի, Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի նախագահի կողմից տրված բողոքները, վորոնք վերաբերում են որինական ուժի մեջ մտած գատավճիռներին, վճիռներին ու վորոշումներին.

բ) գատական նիստերում քննելով Միութենական հանրապետության գատարանների կող-

մից վորոշված գործերի առթիվ տրված դանդաաներն ու բողոքները:

ՀՈՒՎԱԾ 52. Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի նախագահը, նախագահում և գատական նիստերին կամ գատական նիստերին նախագահելու համար նշանակում և Միութենական հանրապետության Գերագույն Դատարանի անդամին, նշանակում և գործեր լսելը, կարգադրություն և անում մեղադրյալներին, վկաներին, եքսպերտներին գատարան կանչելու և գործը քննելու ժամանակի մասին ծանուցում և հայցվորներին ու պատասխանողներին:

VI.

ԽՍՀՄ ՀԱՏՈՒԿ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

ՀՈՒՎԱԾ 53. **ԽՍՀՄ** Սահմանադրության 102-րդ հոդվածի հիման վրա գործում են **ԽՍՀՄ** հետեւյալ հատուկ գատարանները՝

ա) ղինվորական տրիբունալները.

բ) յերկաթուղային տրանսպորտի գծային գատարանները՝

գ) ջրային տրանսպորտի գծային գատարանները.

ՀՈՒՎԱԾ 54. **ԽՍՀՄ** Սահմանադրության 105-րդ հոդվածի համապատասխան, **ԽՍՀՄ** հա-

տուկ դատարանների նախագահը, նախագահի տեղակալները, անդամներն ընտրվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈՒՎԱԾ 55. Զինվորական տրիբունալները, յերկաթուղային և ջրային տրանսպորտի գծային դատարանների դատական նիստերին մասնակցելու ներգրավվում են ժողովրդական ատենակալներ, փորոնք ընտրվում են աշխատավորների ղեկավարների յերկրամասային ու մարզային Խորհուրդների կողմից և Միութենական ու Ավստրոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից:

ՀՈՒՎԱԾ 56. Զինվորական տրիբունալները, յերկաթուղային ու ջրային տրանսպորտի գծային դատարանները գործերը քննում են նախագահող—նախագահի կամ դատարանի անդամի և յերկու ժողովրդական ատենակալների կազմով: Բացի այն դեպքերից, յերբ ըստ որենքի գործերը քննվում են համապատասխան դատարանի յերեք անդամների կազմով:

ՀՈՒՎԱԾ 57. Զինվորական տրիբունալներ կազմակերպվում են.

ա) զինվորական օկրուգներին, ռազմաճակատներին և ծովային նավատորմներին կից.

բ) բանակներին, կորպուսներին և այլ զինվորական միավորումներին ու ռազմականացված հիմնարկություններին կից:

ՀՈՒՎԱԾ 58. Զինվորական տրիբունալները քննում են զինվորական հանցագործություններին վերաբերյալ գործերը, ինչպես և որենքով նրանց իրավասությանը վերապահված այլ հանցագործությունների վերաբերյալ գործերը:

ՀՈՒՎԱԾ 59. Ոկրուգներին, ռազմաճակատներին և ծովային նավատորմներին կից զինվորական տրիբունալները քննում են որենքով իրենց իրավասությանը վերապահված քրեական գործերը, ինչպես և քննում են բանակների, կորպուսների, այլ զինվորական միավորումների ու ռազմականացված հիմնարկությունների զինվորական տրիբունալների քննած գործերի դատավճիռների վերաբերյալ տրված դանդառներն ու բողոքները:

ՀՈՒՎԱԾ 60. Յերկաթուղային ու ջրային տրանսպորտի գծային դատարանները քննում են որենքով նրանց իրավասությանը վերապահված գործերն այն հանցագործությունների վերաբերյալ, փորոնք նպատակն է՝ վիժեցնել աշխատանքային կարգապահությունը տրանսպորտում և տրանսպորտի նորմալ աշխատանքը խախտող

սուրիշ հանցագործությունների վերաբերյալ
գործերը:

ՀՈՒՎԱԾ 61. Յերկաթուղային ու ջրային
տրանսպորտի զծային դատարանները կազմա-
կերպվում են համապատասխանորեն՝ յերկա-
թուղիների և հաղորդակցության ջրային ճանա-
պարհների վրա:

ՀՈՒՎԱԾ 62. Զինվորական տրիբունալնե-
րի, յերկաթուղային ու ջրային տրանսպորտի
զծային դատարանների նախագահները նախա-
գահում են դատական նիստերին կամ դատա-
կան նիստերին նախագահելու համար նշանա-
կում են զինվորական տրիբունալների և զծա-
յին դատարանների անդամներին, նշանակում
են գործերը լսելը, կարգադրություն են անում
մեղադրյալներին, վկաներին, եքսպերտներին
դատարան կանչելու մասին:

VII.

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՀՈՒՎԱԾ 63. ԽՍՀՄ Սահմանադրության
104 և 105-րդ հոդվածների համապատասխան՝
ԽՍՀՄ Գերագույն Դատարանը հանդիսանում է
բարձրագույն դատական որդանը և ընտրվում է
ԽՍՀՄ գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի
ժամանակով:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի վրա չե-
զրված ԽՍՀՄ և Միութենական հանրապետու-
թյունների բոլոր դատական որդանների դա-
տական գործունեյության հսկողությունը:

ՀՈՒՎԱԾ 64. ԽՍՀՄ և Միութենական հան-
րապետությունների բոլոր դատական որդան-
ների դատական գործունեյության նկատմամբ
Գերագույն Դատարանն իր հսկողությունն իրա-
կանաջնում է հետևյալ կարգով՝

ա) քննելով ԽՍՀՄ Դատախազի և ԽՍՀՄ
Գերագույն Դատարանի նախագահի բողոքները,
դատարաններին՝ որինական ուժի մեջ մտած դա-
տավճիռների, վճիռների ու վորոշումների վերա-
բերյալ.

բ) քննելով զինվորական տրիբունալների
և յերկաթուղային ու ջրային տրանսպորտի
զծային դատարանների կողմից քննված գործերի
վերաբերյալ գանդատներն ու բողոքները:

ՀՈՒՎԱԾ 65. ԽՍՀՄ Գերագույն Դատարա-
նը կազմված է նախագահից, նախագահի տե-
ղակալներից, Գերագույն Դատարանի անդամ-
ներից և ժողովրդական ատենակալներից, վորոնք
կանչվում են դատական գործերի քննությանը
մասնակցելու, և գործում է հետևյալ կազմով՝

ա) քրեական գործերի դատական կոլեգիա.

բ) քաղաքացիական գործերի դատական կոլեգիա»

գ) զինվորական կոլեգիա»

դ) յերկաթուղային կոլեգիա»

յե) ջրային տրանսպորտի կոլեգիա»

✓ **ՀՈՒՎԱԾ 66.** ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան քննում է ուրենքով նրա իրավասությանը վերապահված քրեական գործերը, ինչպես և քննում է Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ տրված բողոքները:

✓ **ՀՈՒՎԱԾ 67.** ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քաղաքացիական գործերի դատական կոլեգիան քննում է ուրենքով նրա իրավասությանը վերապահված քաղաքացիական գործերը, ինչպես և քննում է Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների վճիռների ու վորոշումների վերաբերյալ տրված բողոքները:

ՀՈՒՎԱԾ 68. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական և քաղաքացիական գործերի դատական կոլեգիաները գործերը քննում են նախագահող—նախագահի կամ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի անդամի և յերկու ժողովրդական ատենակալների կազմով:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի քրեական ու քաղաքացիական դատական կոլեգիաները Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների դատավճիռների, վճիռների ու վորոշումների վերաբերյալ տրված բողոքները քննում են ԽՍՀՄ Գերագույն Դատարանի յերեք անդամների կազմով:

✓ **ՀՈՒՎԱԾ 69.** ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիան քննում է ուրենքով նրա իրավասությանը վերապահված գործերը, ինչպես և քննում է զինվորական տրիբունալների դատավճիռների ու վորոշումների վերաբերյալ տրված բողոքներն ու գանդատները:

ՀՈՒՎԱԾ 70. ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիան գործերը քննում է նախագահող—նախագահի կամ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի զինվորական կոլեգիայի անդամի և յերկու ժողովրդական ատենակալների կազմով, բացի այն դեպքերից, վորը հատկապես նախատեսված է քրեական պրոցեսուալ ուրենագրքով, յերբ գործերը քննվում են Զինվորական կոլեգիայի յերեք անդամների կազմով:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիան՝ Զինվորական տրիբունալների դատավճիռների և վորոշումների վերաբերյալ

դանգաւաններն ու բողոքները քննուած եւ խՍՀՄ Գերագոյն Դատարանի Զինվորական կոլեգիայի յերեք անգամներ ի կազմով:

✓ **ՀՈՒՎԱԾ 71.** խՍՀՄ Գերագոյն Դատարանի յերկաթուղային եւ ջրային տրանսպորտի կոլեգիաները քննուած են որենքով նրանց իրավասութեանը վերապահված հանցագործութեաններին վերաբերող գործերը, ինչպէս եւ քննուած են յերկաթուղային եւ ջրային տրանսպորտի գծային դատարանների դատավճիռների ու վորոշումների վերաբերյալ տրված բողոքներն ու դանգաւանները:

ՀՈՒՎԱԾ 72. խՍՀՄ Գերագոյն Դատարանի յերկաթուղային ու ջրային տրանսպորտի կոլեգիաները գործերը քննուած են նախագահող — նախագահի կամ համապատասխան կոլեգիայի անդամի եւ ժողովրդական տտեսակաւների կազմով:

ՀՈՒՎԱԾ 73. խՍՀՄ Գերագոյն Դատարանի յերկաթուղային ու ջրային տրանսպորտի կոլեգիաները յերկաթուղային եւ ջրային տրանսպորտի գծային դատարանների դատավճիռների ու վորոշումների վերաբերյալ տրված բողոքներն ու դանգաւանները քննուած են խՍՀՄ Գերագոյն Դատարանի համապատասխան կոլեգիաները՝ յերեք անգամների կազմով:

ՀՈՒՎԱԾ 74. խՍՀՄ Գերագոյն Դատարանի նախագահը կարող ե իր վրա վերցնել խՍՀՄ Գերագոյն դատարանի կոլեգիաների քննութեանը տրված ամեն մի գործի նախագահութեանը:

խՍՀՄ Գերագոյն Դատարանի նախագահը եւ խՍՀՄ Դատախազը իրավունք ունեն խՍՀՄ կամ Միութենական հանրապետութեանների ամեն մի դատարանից պահանջելու ամեն մի գործ եւ այդ գործի առթիւ որենքով սահմանված կարգով մտցնելու իրենց բողոքը:

ՀՈՒՎԱԾ 75. խՍՀՄ Գերագոյն Դատարանի կոլեգիաների դատավճիռների, վճիռների եւ վորոշումների վերաբերյալ խՍՀՄ Գերագոյն Դատարանի նախագահի կամ խՍՀՄ Դատախազի տված բողոքները քննելու համար հրավիրուած ե խՍՀՄ Գերագոյն Դատարանի պլենում, վորը նաեւ դեկավար ցուցումներ ե տալիս դատական պրակտիկայի հարցերի վերաբերյալ խՍՀՄ Գերագոյն Դատարանի կողմից քննված դատական գործերի առթիւ ընդունված վորոշումների հիման վրա:

ՀՈՒՎԱԾ 76. խՍՀՄ Գերագոյն Դատարանի պլենումը կազմված ե խՍՀՄ Գերագոյն Դատարանի նախագահից, նրա տեղակալներից

և ԽՍՀՄ Գերագույն Դատարանի բոլոր անդամ-
ներին:

ԽՍՀՄ Դատախազի մասնակցութիւնը պլե-
նումին պարտադիր է:

ԽՍՀՄ Գերագույն Դատարանի պլենումի
նիստերին մասնակցում է ԽՍՀՄ Արդարադա-
տության ժողովրդական կոմիսարը:

ՀՈՂՎԱԾ 77. ԽՍՀՄ Գերագույն Դատարա-
նի պլենումի նիստերը հրավիրվում են վաղ առ-
ջան յերկու տմիսը մեկ անգամ:

VIII.

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 78. Քաղաքացիական գործերով
վճիռների և վորոշումների կատարումը և
քրեական գործերով դատավճիռների կատա-
րումը գույքային բնագանձումների մասում՝ կա-
տարվում է դատական կատարածուների կող-
մից:

ՀՈՂՎԱԾ 79. Դատական կատարածուները
գանվում են ժողովրդական դատարաններին,
սկրուդային, յերկրամասային, մարդային դա-
տարաններին, ավտոնոմ մարզերի դատարան-
ներին, ավտոնոմ և միութենական հանրապետու-
թյունների Գերագույն Դատարաններին կից և

նշանակվում են միութենական հանրապետու-
թյան Արդարադատության ժողովրդական կոմի-
սարի ատի կողմից, իսկ ավտոնոմ հանրապետու-
թյուններում՝ ավտոնոմ հանրապետության Ար-
դարադատության ժողովրդական կոմիսարի ատի
կողմից:

ՀՈՂՎԱԾ 80. Դատական դատավճիռների
վճիռների ու վորոշումների կատարման համար
դատական կատարածուների ներկայացրած բո-
լոր պահանջները պարտադիր են բոլոր պաշ-
տոնատար անձանց և քաղաքացիների համար:

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳՈՐԿԻՆ

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ
1938 թ. 16 ՈԳՈՍՏՈՍԻ

ՑԱՆԿ

	հոդվածներ.	էջ
I. Ընդհանուր դրույթներ	1-20	3
II. Ժողովրդական դատարանը	21-29	12
III. Յերկրամասային, մարգային, ոկրուգային, դատարանը և ավտանոմ մարզի դատարանը	30-37	17
IV. Ավտանոմ հանրապետության Գերագույն դատարանը	38-44	21
V. Միութենական հանրապետության Գերագույն դատարանը	45-52	24
VI. ԽՍՀՄ Հատուկ դատարանները	53-62	27
VII. ԽՍՀՄ Գերագույն դատարանը	63-77	30
VIII. Դատական կատարածուներ	78-80	35



<< Ազգային գրադարան



NL0207553

ԳԻՆԸ 85 ԿՈՊ.

2 62

38.364